ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԿՏՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Սովետական ժողովուրդը Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյա տարեդարձը դիմավորեց երկրում կատարվող արմատական վերափոխումների պայմաններում։ 1921 թ. գրած «Հոկտեմբերյան հեղափոխության քառամյա տարեդարձի առթիվ» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում էր. «Որքան ավելի է հեռանում մեզանից այդ օրը, այնքան մենք ավելի ենք խորամուխ լինում նաև մեր աշխատանքի գործնական փորձի մեջ՝ ամբողջությամբ վերցրած»[1]։ Ինչպես այս, այնպես էլ 1921 թ. մյուս հոդվածներում և ելույթներում, նշելով հաջողությունները և ձեռքբերումները, Վ. Ի. Լենինը ծանրության կենտրոնը տեղափոխում էր դժվարությունների, դրանց ծնող պատճառների և թույլ տված սխալների վերացման վրա։ Հակասությունների հաղթահարման մեջ տեսնելով զարգացման հեռանկարը, Վ. Ի. Լենինը սոցիալիստական հասարակարգի ներդաշնակ զարգացման գրավական էր համարում ստեղծագործական քննադատությունն ու ինքնաքննադատությունը։ Վ. Ի. Լենինի՝ նշված ժամանակահատվածի պրակտիկ գործունեությունը և տեսական ժառանգությունն անսպառ աղբյուր է այսօրվա խնդիրների հաջող լուծման համար։ Առաջին հերթին այն պատճառով, որ 1921 թ. երկրում տեղ գտած տնտեսական դժվարություններն առաջնորդը վերլուծեց իրենց բոլոր շարժառիթների հանրագումարով, որը և հնարավորություն տվեց վերացնելու դրանք ծնող պատճառները։ «Տնտեսական ճակատում կոմունիզմի անցնելու փորձ անելիս, — գրում էր նա, — մենք 1921 թ. գարնանն ավելի լուրջ պարտություն կրեցինք, քան որևէ այլ պարտություն»[2]։

Սոցիալիզմին անցնելու ճակատային գրոհի քաղաքականությունը (ռազմական կոմունիզմ) փոխարինելով շրջահայաց քաղաքականությամբ (ՆԷՊ), Վ. Ի. Լենինը ցույց տվեց այդ քաղաքականությունը երկրի պատմական կոնկրետ պայմաններին համապատասխան վերակառուցելու դասական օրինակ։ Բնավ պատահական չէ, որ ՍՄԿԿ XXVII համագումարն ընդհանուր երանգներով հիշեցնում է 1921 թվականը[3]։ Դա անխուսափելի է դարձնում 1921 թ. վերակառուցման ժամանակաշրջանի հարցերը Վ. Ի. Լենինի պրակտիկ գործունեության և տեսական ժառանգության ոգուն համապատասխան ուսումնասիրելու և դրանցից դասեր առնելու անհրաժեշտությունը։ Անշուշտ, անցման շրջանի հարցերի ամբողջական խորությամբ վերհանումը կապված է դժվարությունների հետ, որոնցից մեկն էլ այն է, որ չնայած այս ժամանակաշրջանի հարցերի մասին սովետական պատմագիտության մեջ կան բազմաթիվ աշխատություններ, բայց դրանցում ավելի շատ ուշադրություն է դարձվել ձեռք բերած հաջողություններին և աչքաթող է արվել պատմական փորձն «ամբողջությամբ վերցրած» քննարկելու լենինյան ուշագրավ պատգամը։ Լենինյան ուղեցուցային դրույթներին հասարակագիտության ոչ միշտ հավատարիմ լինելը նկատի ունենալով էր Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենումում նշում, որ «որոշակի հանգամանքների բերումով տեսությունից և հասարակագիտությունից անհետացել էին կենդանի բանավեճը և ստեղծագործական միտքը, իսկ ավտորիտար գնահատականներն ու դատողու-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 172։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 190։

3 Стефан Опара, Критика при социализме («Проблемы мира и социализма», 1987, № 3, с. 65).

թյունները սոսկ մեկնաբանման ենթակա անառարկելի ճշմարտություններ էին դարձել... Սոցիալիզմի մասին լենինյան դրույթները մեկնաբանվում էին պարզունակ ձևով, հաճախ ամլացվում էին դրանց տեսական խորությունն ու նշանակությունը»[4]։ Դրությունը շտկելու նպատակով կուսակցությունը հասարակագետների առաջ խնդիր է դնում խորությամբ և պրակտիկային համապատասխան ուսումնասիրել հասարակական-քաղաքական կյանքի հանգուցային հարցերը, վեր հանել սոցիալիզմի անցած պատմական ուղու դժվարություններն ու թույլ տված սխալները՝ արված գիտական հետևություններն ու ընդհանրացումները այսօրվա խնդիրներին ծառայեցնելու նպատակով։

Սովետահայ պատմագիտության մեջ ցայսօր կա՞մ արդարացվել է Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը[5], կա՞մ ցույց է տրվել նրա սխալ լինելը[6]։ Վերջիններն իրավացիորեն քննադատել են այդ քաղաքականության կիրառումն արդարացնող հեղինակներին։ Նրանք, հենվելով Ա. Մյասնիկյանի և Ս. Լուկաշինի (Սրապիոնյան) ՀԿԿ և ՀՍՍՀ սովետների անդրանիկ համագումարներում այդ հարցի վերաբերյալ արտահայտած այն հիմնավոր տեսակետների վրա, որ Հայաստանում ի սկզբանե պետք է կիրառվեր շրջահայաց տնտեսական քաղաքականություն, ցույց են տվել, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում սխալ էր և ունեցավ ծանր հետևանքներ։ Բայց այդ հեղինակները բավարարվել են ընդհանուր գծերով Հայհեղկոմին և ՀԿԿ Կենտկոմին քննադատելով այն բանում, որ նրանք մեխանիկորեն կիրառեցին Սովետական Ռուսաստանի տնտեսական քաղաքականությունը։ Հարցի նման ընդհանուր մոտեցման արդյունքը եղել է այն, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության հեղինակները մնացել են ստվերում և նրանց փոխարեն հանիրավի քննադատվել են նաև այն ղեկավար գործիչները, ովքեր իրականում դեմ են եղել այդ քաղաքականության կիրառմանը։

ՀԿԿ I համագումարին Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ Ս. Լուկաշինը ռազմական կոմունիզմի քաղաքականության սխալականության մասին իր դիտողությունները խարսխում էր ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի անդամների միջև եղած տարաձայնությունների վրա։ Նա նաև այդ քաղաքականությունն իրագործողներին անուղղակի հասկացնել էր տալիս, որ նրանք սխալ են եղել։ Պատահական չէ, որ Ս. Լուկաշինի հաշվետու զեկուցումից հետո հարակից զեկուցումով հանդես եկող Ա. Նուրիջանյանը, որպես Ս. Լուկաշինի արած դիտողությունների հակափաստարկ, հայտարարեց, թե «մինչև փետրվար մեր կուսակցությունը տնտեսական որևէ քաղաքականություն չի վարել։ Նրան մենք չենք կարող մեղադրել տնտեսական նոր քաղաքականություն չվարելու համար, որովհետև այդ ժամանակ մեզանից և ոչ ոք չէր կարող այդ քաղաքականության կիրառման մասին մտածել»[7]։ Սակայն, եթե ռազմական կոմունիզմի քաղաքականությունը չի նպաստել Հայաստանում սովետական իշխանության ամրապնդմանը, դա դեռ ապացույց չէ այն բանի, որ այն չի կիրառվել։ Որպես ապացույց կարելի է բերել ՀԿԿ I համագումարում

4 «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1987 թ. հունվարյան պլենումի նյութերը», Երևան, 1987, էջ 11։

5 Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Երևան, 1955, Վ. Ն. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Երևան, 1956, Ս. Մ. Սահրադյան, Ռազմահեղափոխական կոմիտեները Հայաստանում (1917—1922), Երևան, 1961, Շ. Ռ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1970 և այլք։

6 Գ. Մ. Գեզամյան, Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1976, № 3, էջ 65—74), նույնի՝ Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին, Երևան, 1978, Բ. Ս. Օհանջանյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Երևան, 1982։

7 «Խորհրդային Հայաստան», 29. I. 1922։

Ս. Լուկաշինի՝ արտահայտած հետևյալ միտքը. «Եթե նախափետրվարյան շրջանում մեր կառավարությունը որոշ բռնագրավումների և խստությունների է դիմել, ապա նա այդ արել է ելնելով մեր ուղիղ քաղաքականությունից»[8]։ «Ուղիղ քաղաքականություն» ասելով Ս. Լուկաշինը նկատի ունի ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ 1922 թ. հունվարի 15-ին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված «Մեր կուսակցության առաջին համագումարը» առաջնորդող հոդվածում ՀԿԿ Կենտկոմի մինչփետրվարյան քաղաքականության մասին գրված է. «Նա (Կենտկոմը—Կ.Ս.) դիմեց զինվորական կոմունիզմի հարկադրական մեթոդներին։ Մեր կուսակցության պատմության այդ ժամանակաշրջանը հենց այդպես էլ բնորոշվում է զինվորական կոմունիզմի շրջան»։ Ուրեմն, հիմնավորված չէ Ա. Նուրիջանյանի փաստարկի առաջին մասը, որ մինչև փետրվար ՀԿԿ Կենտկոմը որևէ տնտեսական քաղաքականություն չի վարել։ Ավելի կարևոր է Ա. Նուրիջանյանի փաստարկի երկրորդ մասը՝ արդյո՞ք մինչև ՌԿ(բ)Կ X համագումարը և Ա. Մյասնիկյանի ու Ս. Լուկաշինի Հայաստան գալը ոչ ոք չի մտածել ուրիշ տնտեսական քաղաքականություն վարելու մասին։

1920 թ. դեկտեմբերի 9-ին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը Երևանում կայացած կոմունիստների ժողովում «Ընթացիկ մոմենտի մասին» զեկուցման մեջ, անդրադառնալով հանրապետության տնտեսական խնդիրներին, նշում էր. «Հայաստանը գլխավորապես գյուղացիական մանր տնտեսության մի երկիր է։ Տնտեսական քաղաքականությունը երբեք չի կարելի միանգամայն անցկացնել ամբողջ երկրում, նա կախված է երկրի անմիջական կազմից։ Տվյալ դեպքում Հայաստանի նկատմամբ չի կարելի անցկացնել Խորհրդային Ռուսաստանի և նույնիսկ Ադրբեջանի տնտեսական քաղաքականությունը։ Խոշոր գործարանները, որոնք մատների վրա կարելի է հաշվել, իհարկե, կազգայնացվեն։ Կպայքարենք նույնպես գյուղացիական կուլակների դեմ...։ Ինչ վերաբերում է միջին գյուղացիությանը, մանր տնտեսություն վարողներին, տնայնագործությամբ պարապողներին, ինչպես ցույց տվեց Խորհրդային Ռուսաստանի փորձը, ձեռք չենք տա»[9]։ Հայաստանի տնտեսական ծանր վիճակը Ս. Կասյանը վերլուծում էր ճիշտ դիրքերից, հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները, ինչպես նաև Սովետական Ռուսաստանի փորձը։ Պարզվում է, որ ոչ թե տնտեսական ուրիշ քաղաքականության մասին մտածող չի եղել, այլև այն, որ Հայաստանի Հեղկոմի նախագահը ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառմանը սկզբունքորեն դեմ է եղել։ Այս հանգամանքն իսկ հուշում է, որ Ա. Նուրիջանյանը տնտեսական քաղաքականության հարցում ի սկզբանե համակարծիք չի եղել Ս. Կասյանի հետ։ Այլապես ուրիշ ի՞նչ հանգամանք պետք է ստիպած լիներ, որ նա իրականությանը չհամապատասխանող այդպիսի հայտարարություն աներ կուսակցության համագումարում, մանավանդ, որ Ս. Կասյանն իր տեսակետները շարադրել էր կուսակցական ակտիվի ժողովում և այն տպագրել մամուլում[10]։ Հնարավոր է, որ Ա. Նուրիջանյանը նկատի է ունեցել ոչ թե քաղաքականության բովանդակությունը, այլ սոսկ անվանումը, որովհետև եթե Հայաստանում ներքին քաղաքականությունը տարվեր Հայհեղկոմի նախագահի հիշատակած ելույթում բովանդակած սկզբունքներով, բնական է, որ այդ քաղաքականության անունը նոր տնտեսական քաղաքականություն չէր լինի, բայց իր բովանդակությամբ և նպատակադրվածությամբ կհամապատասխաներ նրան։ Հարցի քննությունից պարզվում է, որ Ա. Նուրիջանյանը բնավ էլ քաղաքականության անվանումը նկատի չի ունեցել, այլ հենց բովանդակությունը։ Այդ մասին արժեքավոր տեղեկություն է հայտնում Ա. Գ. Հովհաննիսյանը. «Հիշում եմ, որ Կենտկոմի նիստերից մեկում (հավանաբար հունվարի առաջին կեսին — Կ. Ս.) նա (Մռավյանը — Կ. Ս.) կարդաց իր հետ Մոսկվայից բերած չորս էջանոց մի գրություն, որ կազմել էր Վաղլամ Ավանեսովը՝ Լենինի գրույց-

8 Նույն տեղում, 28. I. 1922։

9 Ս. Կասյան, Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 185—186։

10 «Կոմունիստ», 12. XII. 1920։

ների և ցուցումների հիման վրա ձևակերպելով այն սկզբունքները, որոնցով նրա կարծիքով ղեկավարվելու էին Կովկասի ընկերները։ Կովկասի քաղաքականության այդ սկզբունքները մասամբ հիշեցնում էին այն նամակը, որ ամիսներ անց Կովկաս բերեց Մյասնիկյանը։ Սակայն Ավանեսովի ձեռքով շարադրված հանձնարարականները չունեին հարկ եղած կշիռը՝ Ավիս-Կոստանյանի քաղաքական ընթացքը նոր հունի մեջ դնելու համար, և Մռավյանի բորբոքված ձայնը միայն տարակուսանք արտահայտող բացականչությունների հանդիպեց Կենտկոմի նիստում»[11]։ Այսպիսով, Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության հեղինակներից էին ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի անդամ Ա. Նուրիջանյանը և ՀԿԿ Կենտկոմի անդամ Հ. Կոստանյանը, որը հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի ժողովրդական կոմիսարն էր։[12]։ Պարզվում է նաև, թե ինչու Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը չի կարողացել իրական կերպարանք տալ իր 1920 թ. դեկտեմբերի 9-ի ելույթի ոգուց բխող խնդիրներին, որովհետև ՀԿԿ Կենտկոմի մեծամասնությունը համոզված էր, որ Հայաստանում ևս պետք է կիրառվի ռազմական կոմունիզմ։

ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի ղեկավարների միջև եղած տարաձայնությունները սկիզբ են առել հանրապետությունում սովետական կարգերի հաստատման առաջին օրերից և դրա համար հիմնավոր պատճառ են հանդիսացել տնտեսական քաղաքականության խնդիրները։ Վերջիններիս ճիշտ լուծումից էլ մեծապես կախված էր ներքին կյանքի մի շարք ցավոտ հարցերի կարգավորումը։ Զարմանալին այն է, որ ՀԿԿ Կենտկոմի նիստում «միայն տարակուսանք արտահայտող բացականչությունների» են հանդիպել Լենինյան ցուցումներով Մոսկվայից վերադարձած Ա. Մռավյանի հիմնավոր փաստարկները։ Զարմանալի է և հակասական, որովհետև հենց ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի հանձնարարությամբ էին Ս. Տեր-Գաբրիելյանը և Ա. Մռավյանը մեկնել Մոսկվա՝ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարցերում ՌՍՖՍՀ կառավարության դիրքորոշումը պարզելու և առաջնորդից ցուցումներ ստանալու։ ՀԿԿ Կենտկոմը կարող էր ընդունել Ա. Մռավյանի փաստարկները. նույնիսկ այն դեպքում, եթե նա Մոսկվայից ոչ մի գրություն էլ բերած չլիներ։

Քննվող ժամանակահատվածի տնտեսական խնդիրներով զբաղվող պատմաբանները չեն անդրադարձել տնտեսական քաղաքականության հարցերում ՀԿԿ Կենտկոմի անդամների միջև եղած սկզբունքային տարաձայնություններին։ Դեռ ավելին, փորձ է արվել հավասարության եզրեր տեսնել այն ղեկավարների գործելակերպում, որոնք իրականում ունեցել են տարբեր դիրքորոշումներ։ Բ. Օհանջանյանը գրում է. «Սովետական Հայաստանի ղեկավարներից շատերը, առաջին հերթին Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ալիխանյանը, կարծում էին, որ եթե Ռուսաստանում ռազմական կոմունիզմ է մտցվել, ապա նույնը անհրաժեշտաբար պետք է մտցվի նաև Հայաստանում»[13]։ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանի դիրքորոշման հարցում հեղինակը միանգամայն իրավացի է։ Ընդդեմ Ս. Կասյանի և Ա. Մռավյանի Կենտկոմում մեծամասնություն էին կազմում Գ. Ալիխանյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը և Ի. Դովլաթյանը։ Սակայն Ս. Կասյանի հասցեին հեղինակի մեղադրանքը հանիրավի է։ Բ. Օհանջանյանի նման վերաբերմունքը արդյունք է այն բանի, որ հեղինակը պատմական փաստերի փոխարեն հրամցրել է իր ենթադրությունները, և դա այն պարագայում, երբ ինքը, մեղադրելով հիշյալ ժամանակաշրջանով զբաղվող պատմաբաննե-

---

11 Ա. Գ. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 97—98։

12 1921 թ. հունվարի 11-ի Հայհեղկոմի հրամանով Հ. Կոստանյանը ազատվեց սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարի պաշտոնից, մնալով որպես աշխատանքի ժողովրդական կոմիսար։ Սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսար նշանակվեց Դ. Տեր-Սիմոնյանը։

13 Բ. Ս. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 41։

ին, պահանջում է, որ ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի գործունեությունը մինչև 1921 թ. փետրվար բացահայտվի Վ. Ի. Լենինի՝ 1921 թ.ապրիլի 14-ի Կովկասի կոմունիստներին հղած նամակի դրույթների լույսի տակ[14]։ Եթե Վ. Ի. Լենինի նամակում բովանդակած դրույթները համադրենք Ս. Կասյանի դեկտեմբերի 9-ի ելույթին և Ա. Մռավյանի՝ Մոսկվայից բերած գրությանը, ապա պարզ կտեսնենք, որ պահանջը նույնն է՝ վարել երկրի առանձնահատկություններից բխող շրջահայաց քաղաքականություն, որը, տնտեսական խնդիրները լուծելուց բացի, հանդիսանար նաև լավագույն պրոպագանդա հօգուտ սովետական իշխանության։ 1921 թ. հունվարի վերջին, երբ ՀԿԿ Կենտկոմի անդամների միջև տարաձայնությունները շարունակվում էին, Ս. Կասյանը և Ա. Մռավյանը Դ. Օրջոնիկիձեի անունով ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին հղած հունվարի 28-ի հեռագրում մասնավորապես նշում էին, որ «կառավարության և կուսակցության անհամաձայնեցված գործունեությունը, նրանց ֆունկցիաների խառնումը, մի քանի հեղկոմների անկարգապահությունը, մի շարք պատասխանատու աշխատողների անպատասխանատու և անհամաձայնեցված գործելակերպը ոչ միայն հեղինակազրկում է իշխանությունը բնակչության աչքում, այլև բերում է անկազմակերպվածություն և անարխիա։ Մյուս կողմից, առանց իշխանության թույլտվության վերջին բարիքի անսիստեմ և անպատասխանատու բռնագրավումները... և վերջապես անասելի ծանր սայլային տուրքը բնականաբար առաջ են բերում խուլ դժգոհություն»[15]։ Բերված փաստերն արդյունք էին այն տնտեսական քաղաքականության, որից համառորեն չէին հրաժարվում ՀԿԿ Կենտկոմի նշված անդամները։ Որպես արդարացում իրենց քաղաքականության, նրանք կուսակցության Կովկասյան բյուրոյին հայտնում էին, որ հանրապետության ներքին վիճակը բարվոք է[16]։ Բացի այդ, «Կոմունիստ» թերթում նրանք այդ օրերին տպագրում են հոդվածներ, որոնցում չանում են տպացուցել բռնագրավումների տնտեսական և նույնիսկ քաղաքական անհրաժեշտությունը։ 1921 թ. հունվարի 29-ի՝ «Կատարվում է անխուսափելին» առաջնորդող հոդվածը Երևանում կատարված բռնագրավումների մեջ տեսնում էր հեղափոխական միտում. «խուզարկություններն ունեն գերազանցապես քաղաքական նշանակություն... նախ զրկում են հակահեղափոխականությանը իր հիմնական ուժից-հարստությունից և ապա, այդ նույն պրոցեսում կազմակերպում են և ամրացնում դասակարգային տիրապետության օրգանները։ ...Կատարվում է անխուսափելին, հեղափոխությունը մրտնում է իր հունի մեջ»[17]։ Այս և նման հոդվածները նաև յուրովի պատասխան էին Ս. Կասյանի և Ա. Մռավյանի փաստարկներին, որոնք ապարդյուն չանքեր էին գործադրում, որպեսզի ՀԿԿ Կենտկոմի նշված անդամները հրաժարվեին նման քաղաքականությունից։ Սակայն ՀԿԿ Կենտկոմի այդ անդամները ոչ միայն փորձ չկատարեցին հանրապետությունում ստեղծված ծանր վիճակը վերլուծելու և թույլ տրված սխալներից համապատասխան եզրակացություն անելու համար, այլև պնդեցին այդ ուղղությամբ արված մի շարք արժեքավոր ցուցումներ։ Նրանք փաստորեն դանց առան նաև անհարկի բռնացումներին վերջ տալու և մտավորականության նկատմամբ լոյալ քաղաքականություն վարելու մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ցուցումը[18]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, որը ղեկավարում և ուղղություն էր ցուցց տալիս ՀԿԿ Կենտկոմի գործունեությանը, չանաց կանխել վերջինիս անդամների միջև տեղ գտած տարաձայնությունները։ 1921 թ. օգոստոսի 13-ին

---

14 Նույն տեղում, էջ 288։

15 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 22։

16 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԱ), ֆ. 4033, ց. 2, գ. 1201, թ. 2։

17 «Կոմունիստ», 29. I. 1921։

18 Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Ереван, 1969, с. 406.

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային խորհրդակցությանը տված զեկուցման մեջ Գ. Օրջոնիկիձեն, վերլուծելով Հայաստանի իրավիճակը սովետական կարգերի հաստատումից հետո, նշում էր. «Պրոլետարիատի բացարձակ բացակայությունը... գյուղական բնակչության հետամնացությունը, այդ բոլորը ստիպում էին անցկացնելու շատ զգույշ քաղաքականություն, որի համար էլ Հեղկոմը կազմվեց ավելի լոյալ ընկերներից, որոնց ցուցում տրվեց Հայաստանում սոցիալիստական վերակառուցումներ անցկացնելիս չշտապել»։ Վերլուծելով փետրվարյան խռովության պատճառները, նա ավելացնում էր. «Այդ դավաճանական գործը հեշտացավ մեր մի քանի ընկերների շատ կտրուկ քաղաքականությամբ, որը հասավ նույնիսկ այնպիսի անիմաստ դեպքերի, ինչպես մեղվի փեթակների ազգայնացումը»[19]։ Ինչպես տեսնում ենք, Գ. Օրջոնիկիձեի զեկուցման մեջ նշվում էր, որ տեղական առանձնահատկություններից ելնելով և դրան համապատասխան շրջահայաց քաղաքականություն վարելու միտումով Հայաստանի Հեղկոմը կազմվել էր լոյալ[20] գործիչներից։ Սակայն ներքին քաղաքականությունն ամբողջովին իրականացնում էր ՀԿԿ Կենտկոմը, որի մեծամասնության համար գոյություն չուներ իրականության մարքսիստական վերլուծություն, այլ միայն Ադրբեջանի սխեման»[21]։ Այս տողերը գրել է Ս. Կասյանը՝ 1921 թ. մարտի 29-ին Գ. Օրջոնիկիձեին հղած նամակում։ ՀԿԿ Կենտկոմի «ձախ» թեր ներքին քաղաքականության հարցերում Ադրբեջանի օրինակը բերելով, իր փաստարկները հիմնավորելու ճիշտ կռվան չէր ընտրել։ Նախ, Ադրբեջանում հացի պարտադիր մթերումները հանվել էին 1920 թ. հոկտեմբեր ամսից[22] և հետո նրանց պետք է հայտնի լիներ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. նոյեմբերի 27-ի հետևյալ որոշումը. «Հանձնարարել պարենկոմին, որպես կարևորագույն քաղաքական ու տնտեսական խնդիր, Բաքվին անպայման և կանոնավոր կերպով պարեն մատակարարել նորմայի 100 տոկոսի չափով։ Պարենքաղաքականությունը Ադրբեջանում մեղմացնել, այն է՝ Ադրբեջանում, Մուղանի սահմաններից դուրս, գյուղացիներից հաց բոլորովին չվերցնել, իսկ Մուղանում վերցնել շատ զգույշ[23]»։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը Վրաստանում սովետական կարգերի հաստատման ժամանակ, հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, մեծ զիջումներ արեց մանր բուրժուազիային։ Վ. Ի. Լենինը մարտի 2-ին Գ. Օրջոնիկիձեին գրած նամակում մասնավորապես նշում էր. «Խնդրում եմ հիշել, որ Վրաստանի թե՛ ներքին, թե՛ միջազգային պայմանները վրացական կոմունիստներից պահանջում են ոչ թե ռուսական շաբլոնը կիրառել, այլ հմտորեն և ճկունորեն ստեղծել յուրօրինակ մի տակտիկա, որը հիմնված լինի ամեն տեսակ մանրբուրժուական տարրերի հանդեպ մեծ զիջողականության վրա»[24]։ Այս նամակը մեծ ոգևորությամբ ընդունվեց Վրաստանի մտավորականության կողմից։ Ահա թե ինչ է գրում այդ մասին վրաց գրող Կ. Գամսախուրդիան. «Լենինի նամակը Վրաստանի իր ընկերներին լավ տպավորություն է թողել. «մի կրկնեք ռուսական շաբլոնը»։ Լենինը հաշվի է առնում Վրաստանի միջազգային դրությունը։ Դա իմաստուն է»[25]։

Այսքանից հետո միանգամայն տարօրինակ է թվում մեր պատմագիտական գրականության մեջ երկար տարիներ տեղ գտած այն տեսակետը, որ իբր ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը նպաստեց սովետա-

---

19 Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, М., 1956, с. 197.

20 Գ. Օրջոնիկիձեն Ս. Կասյանի և Ա. Մռավյանի հետ նկատի է ունեցել նաև Հայհեղկոմի անդամներ Ս. Տեր-Գարրիելյանին և Ա. Բեկզադյանին, որոնցից առաջինը Սովետական Հայաստանի ներկայացուցիչն էր Մոսկվայում, իսկ երկրորդը՝ որպես Հայաստանի պատվիրակության ղեկավար հունվարի 18-ին մեկնել էր Մոսկվա։

21 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, գ. 263, թ. 1։

22 «История Азербайджана», т. 3, ч. 1, Баку, 1963, с. 248.

23 Վ. Ի. Լենին, նույն, հ. 42, էջ 56։

24 Վ. Ի. Լենին, նույն, հ. 42, էջ 453—454։

25 «Правда Грузии», 16.IV.1921.

կան իշխանության ամրապնդմանը և զարգացմանը։ Հարցին նման մոտեցում ունեցող հեղինակները, բացի այն, որ շրջանցելով փաստերը, կրկնել են ռուսական պատմագիտության գնահատականները, փաստորեն արդարացնում են նաև Հայաստանում այդ քաղաքականության հեղինակներին։ Պատահական չէ, որ սովետահայ պատմակուսակցական գրականությունը 20-ական թվականների ՀԿԿ գործունեության մեջ տարբեր տեսակի թեքումներ նկատել է, բացի «ձախ» թեքումից։ Նման վիճակը հետևանք է այն բանի, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը գիտվել է որպես սոսկ տնտեսական հարց[26]։ Բայց չէ որ ներքին քաղաքականության մյուս հարցերը՝ նախկին սպաների արտաքսումը Հայաստանից, մտավորականության հանդեպ ոչ լոյալ վերաբերմունքն ու ընդհանրապես բռնացումների քաղաքականությունն ամբողջապես բխում էին ռազմական կոմունիզմի քաղաքականությունից։ Հարցի արհեստական տարանջատումը և այն իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հանրագումարով չքննարկելը հանգեցրել է նրան, որ հանրապետությունում առաջացած հետագա բարդությունների համար քննադատվել են շրջահայաց քաղաքականության կողմնակիցները, որոնք փաստորեն հանդես են եկել ընդդիմախոսի դերում։ Նման միտումը գալիս է նաև այն օրերի քաղաքական գործիչներից։ Քանի որ «ձախերը» չէին տեսնում, որ իրենց վարած քաղաքականությունը չի համապատասխանում հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակին, ուստի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին հղած հեռագրում Հայաստանի օրըստորե ծանրացող վիճակի համար մեղավոր էին ճանաչում Ս. Կասյանին և Ա. Մռավյանին։ 1921 թ. փետրվարի 9-ին Հայաստանում ՌՍՖՍՀ արտակարգ հանձնաժողովի լիազոր Գ. Աթաբեկյանը Գ. Օրջոնիկիձեին հղած հեռագրում, անդրադառնալով ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի անդամների միջև եղած տարաձայնություններին, նշում էր. «Կասյանի և Մռավյանի տարաձայնությունները մյուս ընկերների հետ մեծապես ազդում են գործերի վրա։ Կա՞մ պետք է մնան Կասյանն ու Մռավյանը, կա՞մ էլ Հեղկոմի ու Կենտկոմի մյուս անդամները։ Ճիշտ է, նրանց մեջ ևս քիչ են պետական մարդիկ, բայց Կասյանն ու Մռավյանը բացարձակապես զրկված են հեղափոխական հոտառությունից և ընդունակ չեն կողմնորոշվելու, նրանց տակտիկան գարնանը կհանգեցնի բարդությունների։ Եթե այստեղ լիներ Բեկզադյանը, նա նույնպես կպաշտպաներ Կասյանի գիծը։ Կենտկոմն ինձ հանձնարարել է կյանքում իրագործել իր որոշումը[27]։ ...Հեղկոմի նախագահությունը՝ հանձին Կասյանի և Մռավյանի դեմ է»[28]։ Ինչքան էլ որ Գ. Աթաբեկյանը աշխատել է օբյեկտիվորեն ներկայացնել իրավիճակը, բայց չի կարողացել, որովհետև ինքը «ձախերի» համոզված կողմնակիցն էր։ Եթե Կենտկոմն իրեն էր հանձնարարել իրագործել ընդունած որոշումը, ապա տրամաբանության ո՞ր օրենքով գալիք բարդությունների համար մեղավոր պետք է ճանաչվեր «Ս. Կասյանի ու Մռավյանի գիծը»։ Եվ ապա, այդ ինչպե՞ս եղավ, որ Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմության մեջ որոշակի հետք թողած գործիչները հանկարծ զրկվեցին «հեղափոխական հոտառությունից»։ Փաստերը վկայում են, որ Հայհեղկոմի նախագահը կարողացել էր թափանցել պատմական իրադարձությունների խորքը, օրվա թոհուբոհում տարբերել մնայունն ու անցողիկը։ Այդ է պատճառը, որ նա դեմ է եղել և մասսայական բռնագրավումների քաղաքականությանը, և նախկին սպաներին Հայաստանից արտաքսելուն[29], և համաժողովրդական մտայնությանը խաթարող մյուս ձեռնարկումներին։ Բայց այդ ամենը ոչ նրա համար,

---

26 Բացառություն է կազմում Գ. Մ. Գեղամյանի արդեն հիշատակած աշխատությունը։

27 Խոսքը վերաբերում է բռնացումների քաղաքականությունը ուժեղացնելու՝ հանվարի վերջերին ընդունած ՀԿԿ Կենտկոմի որոշմանը, որից հետո կողմերի միջև վեճեն ընդունում է բացահայտ բնույթ։

28 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 1, գ. 124, թ. 1։

29 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 4049, ց. 2, գ. 1, թ. 5։

որ նա «սատարում էր հակահեղափոխականներին»[30]», այլ այն բանի հաստատ գիտակցումով, որ նման տակտիկան ժամանակավրեպ է և «արհեստականորեն հող է ստեղծում հակահեղափոխականության համար»[31]։ Այդ էր պատճառը, որ 1921 թ. հունվարի 23-ին (մինչև Կենտկոմի հիշատակված որոշումը) Ա. Մռավյանը Բաքվում Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Մ. Աթարբեկյանին հայտնում էր, թե «Աթարբեկովի (Գևորգ) միսիայի շուրջը մեզ մոտ ամենալուրջ վեճեր կան, բանը հասնում է ծայրահեղության։

...Հարկ կլինի որ դուք լրջորեն մտածեք և մեզ հնարավորություն տաք աշխատելու»[32]։ Բայց ստացվեց այնպես, որ դասակարգային պայքարի մթնոլորտում Գ. Աթարբեկյանի գործունեության ձևերն ու մեթոդները ստացան առաջնային նշանակություն։ Շ. Ամիրխանյանը, տարիներ հետո անդրադառնալով փետրվարյան խռովության հարցերին, գրել է. «Մեր ղեկավար կադրերը պետություն ղեկավարելու և հակահեղափոխության դեմ պայքարելու փորձ չունեին»[33]։ Նա առաջին հերթին մեղադրում է Ս. Կասյանին և Ա. Մռավյանին, որոնք ձգտում էին երկիրը ծանր վիճակից դուրս բերել խաղաղ ճանապարհով[34]։ Այն օրերի դեպքերի և իրադարձությունների ակտիվ մասնակցի կարծիքը տարակարծության տեղիք չէր տա և չէր դիտվի իբրև Ս. Կասյանի և Ա. Մռավյանի հասցեին հետին թվով մեղադրանք, եթե չունենար սուբյեկտիվ մեկնակետ։ Ինչպես տեսանք, նա փետրվարյան խռովության նախօրյակին Հայաստանի ծանր վիճակը բացատրում էր նաև լավ և փորձված ղեկավարներ չունենալու հետևանքով։ Բայց երբ խոսում է Գ. Աթարբեկյանի մասին, պատկերը միանգամից փոխվում է։ «Գ. Աթարբեկյանը, — գրում է նա, — ոչ միայն տաղանդավոր, չեկիստ էր, այլ նաև լավ քաղաքական և դիվանագիտական ղեկավար»[35]։ Պարզվում է, որ, այնուամենայնիվ, լավ քաղաքական ղեկավարներ կային, բայց Ս. Կասյանը մեղավոր է, որովհետև նրանց գործելու ավելի լայն ասպարեզ չի տվել։ Իհարկե, Ս. Կասյանին պետք է քննադատել, բայց այն բանի համար, որ նա իբրև հանրապետության գերագույն իշխանության ղեկավար չի գործել վճռական և անվարան։

Չնայած այն բանին, որ պատմական փաստերը և երկրում կատարված արմատական տեղաշարժերն ամբողջապես ապացուցում են, որ Ս. Կասյանի և Ա. Մռավյանի տակտիկան ճիշտ էր, բայց, այնուամենայնիվ, այդ շրջանում հանրապետության ղեկավարների միջև եղած տարաձայնություններին անդրադարձած գրեթե բոլոր հեղինակները քննադատել են նրանց, արդարացնելով մեծամասնության քաղաքականությունը։

Զուգահեռներ անցկացնելով Սովետական Ռուսաստանի հետ, մենք պարզ տեսնում ենք, որ եթե ռազմական կոմունիզմի քաղաքականությունն այնտեղ 1918 թ. առաջնային նշանակություն ստացավ քաղաքացիական պատերազմի հարկադրանքով, ապա Հայաստանում այն մեխանիկորեն կիրառելու ոչ մի անհրաժեշտություն չկար։ Մանավանդ որ, երբ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն, արդեն պարզ երևում էր, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության աղերսով Սովետական Ռուսաստանում առաջացել էին տնտեսական դժվարություններ և ուղիներ էին որոնվում փոփոխությունների համար։ Նաև Սովետական Ռուսաստանի փորձից (ոգուց և ոչ թե տառից) ելնելով էին Ս. Կասյանն ու Ա. Մռավյանը պահանջում խուսափել ռազմական կոմունիզմի մեթոդներից և Հայաստանը դժվարությունից դուրս բերել ավելի

---

30 И. Таирян, Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, с. 226.

31 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 22։

32 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում», Երևան, 1956, էջ 468։

33 Ш. М. Амирханян, Из истории борьбы за Советскую власть в Армении. Ереван, 1967, с. 101.

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 167։

գդույշ և շրջահայաց քաղաքականության միջոցով։ Այսինքն, այնպիսի քաղաքականությամբ, որը հետագայում կիրառեցին Ալ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը։ Կարծեք թե Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 9-ի արդեն հիշատակած միտքն էր շարունակում Ալ. Մյասնիկյանը 1921 թ. մայիսի 9-ին Երևանում ունեցած իր առաջին ելույթում. «Մենք մարքսիստներ ենք և ասում ենք. ուրիշ են պայմանները, ուրիշ պետք է լինեն նաև միջոցները»[36]։ Զարգացնելով իր միտքը, նա այնուհետև նշում էր. «Մենք եկել ենք այստեղ ոչ թե քաղաքացիական կռիվ անելու, շարշարելու, այլ աշխատավորությանը տանելու դեպի խաղաղ, հանգիստ աշխատանք՝ առանց շահագործման, առանց կռվի դեպի կոմունիզմ»[37]։ Որպես ՀԿԿ Կենտկոմի մեծամասնության մինչփետրվարյան քաղաքականության հանդեպ դրսևորած գործնական վերաբերմունք պետք է դիտել նաև այն, որ նրանք գրեթե ամբողջությամբ դուրս մնացին ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի կազմից։ Անշուշտ կազմակերպական նման գործելակերպը Ալ. Մյասնիկյանի և Ս. Լուկաշինի համար դյուրին էր, որովհետև ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումները և 1921 թ. ապրիլի 14-ին Կովկասի կոմունիստներին Վ. Ի. Լենինի հղած դիրեկտիվ նամակի դրույթները պարտադրում էին քաղաքականությունը վերակառուցել տեղական առանձնահատկություններին համապատասխան։ Սակայն այս հանգամանքը ավելի է բարձրացնում Ս. Կասյանի և Ա. Մռավյանի արժանիքները, որոնք իրավամբ պետք է դասվեն 1921 թ. ամբողջ երկրում կատարված ստրատեգիական փոփոխությունների առաջամարտիկների թվում։ Նրանք, հենվելով լենինյան ցուցումների վրա, ամիսներ առաջ տեսնում էին այն փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնց ըսկիզբը դրեց ՌԿ(բ)Կ X համագումարը։ Մեր կարծիքով, պատմագիտության կողմից այս հարցերի անտեսումն ունեցել է նաև անցանկալի հետևանքներ այն առումով, որ դաշնակցական գործիչները, չարաշահելով իրավիճակը, դրանք ներկայացրել են իրենց ձեռնտու ձևով։

Դաշնակցական գործիչները խնամքով թաքցնում են, որ Հայաստանում հակասովետական հեղաշրջման գաղափարը ծնվել էր Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ և արտացոլված է 1920 թ. դեկտեմբերի 2-ին քեմալականների ու դաշնակցականների միջև ստորագրված տխրահռչակ պայմանագրի 5-րդ հոդվածում[38]։ Հեղաշրջման նպատակով դեռևս դեկտեմբերի սկզբներին ստեղծվել էր «Հայրենիքի փրկության կոմիտեն»։ Սրանք անհերքելի փաստեր են, որոնք ցույց են տալիս, որ դաշնակցականները ներքաշվել էին քեմալականների հակասովետական քաղաքական խարդավանքների մեջ դեռևս այն ժամանակ, երբ ոչ մի բռնագրավում և բռնացում չկար։ Երկար կարելի է խոսել դաշնակցականների «փաստարկների» միակողմանիության մասին, սակայն որքան էլ որ հարցը պարզ է, բայց, այնուամենայնիվ, փաստ է, որ նման վիճակի համար մեղքի մի որոշ բաժին ունի նաև մեր պատմագիտությունը, և դա այն պարզ պատճառով, որ եթե ժամանակին ճշմարտությունն ասվեր ամբողջությամբ, ապա մեր հակառակորդներն առիթը չարաշահելու հնարավորությունից կզրկվեին։

Այսպիսով, Սովետական Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումն ավելի բարդացրեց հանրապետության առանց այն էլ տնտեսական և քաղաքական ծանր վիճակը։ Փետրվարյան հակասովետական խռովությունը ճնշելուց հետո ՀԿԿ Կենտկոմից և Հայաստանի կառավարությունից բավականին ժամանակ և ջանքեր պահանջվեցին հանրապետության ներքին քաղաքականության բնագավառում տեղ գտած բացերն ու դրանց բացասական հետևանքները վերացնելու համար։ Ռազմական կոմունիզմի վերացումը, ներման մասին դեկրետները և նոր տնտեսական քաղաքականության կիրառումը հող ստեղծեցին հանրապետության ժողովրդական տնտեսության հետագա վերականգնման համար։

---

36 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 334։

37 Նույն տեղում, էջ 335։

38 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում», էջ 409։

ИЗ ИСТОРИИ ОСУЩЕСТВЛЕНИЯ ВОЕННОГО КОММУНИЗМА В АРМЕНИИ

КТРИЧ САРДАРЯН

Резюме

Политика военного коммунизма в Армении осуществлялась в острой борьбе между членами ЦК КП и Ревкома Армении. Председатель Ревкома Армении С. Касьян и члены Ревкома А. Мравьян, А. Бекзадян, исходя из тяжелого политического и экономического положения республики, выступили против политики бессистемной реквизиции и конфискации. Другие же деятели—А. Нуриджанян, Г. Алиханян, А. Костанян, И. Довлатян, Г. Атарбекян—придерживались иного мнения. Они были сторонниками претворения в жизнь политики военного коммунизма, осложнившего и без того трудное социально-экономическое и политическое положение республики.